«2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ 7-ՐԴ ՇՐՋԱՆ

II ՓՈՒԼ

«2016թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի երկրորդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար, հոգեմտածողությանը վերաբերող մեկ առաջադրանք և ուշադրություն՝ նորություն է՝ «Հակասությունների բացահայտում» խորագրով մեկ հարց:

Հարցաշարի հարցերի ճիշտ պատասխանները գնահատվում են յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Հոգեմտածողությանը վերաբերող առաջադրանքի պատասխանը, որը կհամընկնի Նոբելյան մրցանակի դափնեկրի կողմից առաջադրված հարցի պատասխան հետ կգնահատվի 5 միավոր՝ չհամընկնելու դեպքում՝ 0 միավոր:

«Հակասությունների բացահայտում» խորագրի ներքո հետայսու կներկայացվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության մեջ առկա հակասությունների, բացթողումների վերաբերյալ հարցեր, որոնցով կստուգվի մրցույթի մասնակիցների օրենսդրության իմացության, համակարգային մտածողության ունակությունները և բացահայտված իրական թերությունների հիման վրա կպատրաստվի առաջարկություններ՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու համար:

Այս խորագրում բացահայտված յուրաքանչյուր հակասություն կամ թերություն կգնահատվի 15 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Հարցաշարից, հոգեմտածողության առաջադրանքից և «Հակասությունների բացահայտում»-ից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Ստորև ներկայացվող հարցաշարի, հոգեմտածողության առաջադրանքի և «Հակասությունների բացահայտում»-ի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2016 թվականի մայիսի 24-ը: Հարցաշարի և խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2016 թվականի մայիսի 25-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիր, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշան և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2017 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2016Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. **Ո՞ր դեպքում աշխատողին աշխատանքից ազատելը չի ձևակերպվում գործատուի հրամանով:**
   Պատասխան – ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում:

2. **Փորձաշրջանում գտնվող անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով աշխատողը փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով առաջադրված պահանջներին չհամապատասխանելու հիմքով ստացել է ծանուցում՝ երեք օր հետո աշխատանքից ազատվելու մասին: Եթե հաջորդ օրն աշխատողը գործատուին ներկայացնի հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, ապա՝**

ա) գործատուն պարտավոր է աշխատողին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ և նշանակել մայրության նպաստ.

բ) գործատուն աշխատողին չի կարող տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ և նշանակել մայրության նպաստ, քանի որ կողմերը նախապես տեղեկացված են եղել աշխատանքային պայմանագիրը երեք օր հետո լուծվելու մասին.

գ) գործատուն պարտավոր է աշխատողին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ և նշանակել մայրության նպաստ՝ մինչև ծանուցմամբ նշված աշխատանքից ազատման օրը:

3. **Անհատ ձեռնարկատերը պարտավո՞ր է յուրաքանչյուր աշխատանքային տարում իրեն տրամադրի ամենամյա արձակուրդ՝**

ա) այո պարտավոր է, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք.

բ) բացի ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված ամենամյա արձակուրդի իրավունքից այդ հարցը կարգավորվում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի այլ իրավական ակտերով.

գ) նման պարտավորություն անհատ ձեռնարկատերը չունի:

4. **Ո՞ր դեպքում տեղափոխված ամենամյա արձակուրդը 18 ամսվա ընթացքում չտրամադրելը կհամարվի օրինական:**

Պատասխան – նպատակային արձակուրդի իրավունք ունենալու դեպքում:

5. **Քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցողին պատվիրատուն կարո՞ղ է ուղարկել գործուղման:**

Պատասխան - Այո կարող է և այդ հնարավորությունը նախատեսված է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի N 753 որոշման 3-րդ մասի «ը[1])» ենթակետով:

«2015Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ «ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Քննարկման հարթակում է գտնվում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածը: Նրա և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ գլխում առկա մյուս հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ բացահայտեք հակասությունը:

Պատասխան – ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածը սահմանում է ամենամյա արձակուրդ հասկացությունը և տեսակները, 159-րդ, 160-րդ, 161-րդ և մանավանդ 162-րդ հոդվածները սահմանում են ամենամյա արձակուրդի տևողությունները: Մինչդեռ ամենամյա արձակուրդ տրամադրելու կարգը սահմանող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածը առանձին դեպքում նույնպես անդրադառնում է հոդվածի անվանմանը ոչ ներհատուկ այնպիսի դրույթների և պարբերությունների, որոնցով սահմանվում է ամենամյա արձակուրդի նոր տևողություն, ընդ որում այդ տևողությունը որևէ տրամաբանական կապով կապված չէ նվազագույն, լրացուցիչ և երկարացված ամենամյա արձակուրդի տևողությունների հետ, և անգամ, առանձին դեպքերում, կարող է դրանց տևողությանը գերազանցել մի քանի անգամ: Փաստորեն, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 7-րդ մասը մեջբերում եմ. «առանց աշխատանքից կտրվելու սովորող աշխատողների ամենամյա արձակուրդը իրենց ցանկությամբ տրամադրվում է քննությունների, ստուգարքների, դիպլոմային աշխատանքների նախապատրաստման, լաբորատոր աշխատանքների կատարման ժամկետներին համապատասխան» մասը, մեր կարծիքով իր տեղում չէ և այն լիովին կարող է տեղավորվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-162 հոդվածներից որևէ մեկում:

Ուշադրություն - այս կարծիքը միակը չէ: Դուք կարող եք բացահայտած լինել նաև այլ հակասություններ: Այդպիսինները հավասարապես կգնահատվեն որպես ճիշտ պատասխան:

«2015Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ ՀՈԳԵՄՏԱՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Որ տարիքային խմբում է կյանքն ավելի արագ անցնում՝ 1-10 տարեկանների, թե 70 տարեկանից բարձր տարիք ունեցող անձանց շրջանում:

Պատասխան՝ 1-10 տարեկան երեխաների մոտ կյանքն ավելի արագ է անցնում, քանի որ՝

ա) հոգեբաններն ասում են, որ մարդու տարիքն այնքան է, որքան նա իրեն հիշում է: Մարդկանց մեծ մասը իրենց հիշում են 2 տարեկանից հետո, ուստի այս տարիքային խմբում առնվազն երկու տարով կյանքն ավելի արագ է անցնում, քան մյուս տարիքի մարդկանց մոտ,

բ) 1-10 տարեկան երեխաները ավելի երկար են քնում, քան 70-ից բարձր տարիք ունեցողները, հետևաբար նրանց «կյանքի տևողությունը» ավելի կարճ է, քան ավելի կարճ քնող ծերունիները:

գ) 1-10 տարեկան երեխաների մոտ մեծ է տարիքով երևալու և մեծանալու ձգտումը և հաճախ ուշադրություն չեն դարձնում կյանքի, օրվա առանձին դեպքերի և մանրամասնությունների վրա, ինչը արագացնում է նրանց կյանքի տեմպը, մինչդեռ 70-ից բարձր տարիք ունեցողներն առավել հաճախ են ուշադրություն դարձնում կենացաղային մանրուքների վրա: